

*Արմ. Տյումանյան*

Ուրախ եմ ըսելու թէ Աստուծոյ ողորմութեամբ եւ համայնքիս ազնիւ ժողովուրդին ցոյց տուած նիւթական ու բարոյական օժանդակութեան շնորհիւ ունեցած ենք յաջող տարի մը:

Վերջացող տարուան ընթացքին ունեցած ենք հետեւեալ գործունէութիւնը: Եկեղեցական արարողութիւնները կեդրոնը կազմելով մեր կրօնական կեանքին, Կիրակի եւ տօնական օրերուն կատարած ենք առաւօտեան ժամերգութիւն, մատուցած Ս Պատարագ, խօսած աւոր պատշաճի քարոզ Հայերէն ու Անգլերէն լեզուներով, ի շինութիւն մեր բարեպաշտ ժողովուրդին:

Վերոյիշեալներու կարգին զբաղած ենք մեր պաշտօնին յատուկ գործերով, այն է հիւանդներու, սպաւորներու այցելութիւն, Տնօրհնէք, Գերեզմանօրհնէք, եկեղեցւոյ յարակից կազմակերպութիւններու ժողովներուն նախագահել, Հայ Դպրոցի դասաւանդութիւն, Լոյս Թերթիկի խմբագրութիւն, եւ այլն:

Կատարած ենք հետեւեալ խորհրդակատարութիւնները:

Սկրտութիւն եւ Դրոշմ 1, Պսակ 1, Թաղում 2:

Փետրուար 20 ին Տէր եւ Տիկին Արտաւազդ Սիմոնեանին, Տէր եւ Տիկին Պետրոս Կալազանին հետ մասնակցած եմ նիւ-Պրիթընի Քանձրընս ավ Զըրչի սարքած տարեկան ճաշկերոյթին: Մարտ 30 ին Առաջնորդ Սրբազանը դիմաւորեցինք: Նոյն օրը ընթրիքէն վերջ Սրբազանը ժողով ունեցաւ եկեղեցւոյ կազմակերպութիւններուն հետ: Յաջորդ օրը պատարագեց, քարոզեց եւ նախագահեց եկեղեցւոյ ՅՅրդ. տարեդարձի հանդիսութիւններուն եւ յաջորդ օրը մեկնեցաւ իր պաշտօնատեղին, նիւ-Եորք:

Մայիս 2-5 մասնակցեցայ եկեղեցականներու համագումարին եւ թեմական Պատգամաւորական ժողովին, ի նիւ-Եորք:

Մայիս 15 ին մասնակցեցայ նիւ-Պրիթընի Սէյթ ձան տհը Էվէնհիլիստ եկեղեցիի սարքած ճաշկերոյթին: Նոյեմբեր 8 ին մեր երեսփոխաններէն ֆօլ Աբրահամեանի հետ ներկայ եղայ Առաջնորդարանի Երջանային ժողովին որ գումարուեցաւ Սբրինկֆիլտի Ս Յովհաննէս եկեղեցիի սրահին մէջ:

Նոյեմբեր 16 ին, Տէր եւ Տիկին Ստեփան Տէր Մարկոսեանին եւ Երէցկիներէն հետ ներկայ եղանք Հարտօքըտի Ս Գէորգ եկեղեցիի տարեդարձի ճաշկերոյթին:

Դեկտեմբեր 1ին եղած մասնաւոր հրաւերին պատասխանելով ներկայ եղայ  
Տէրվիւ Գերեզմաննոցի մատուռին ընծայման արարողութեան:

Եզրափակելով քօսքս, կը փութամ շեշտել թէ հայոց եկեղեցին անկողոպտելի  
ժառանգութիւնն է հայ ազգին, որուն պայծառութիւնն ու բարգաւաճումը կախում  
ունի մեր ցոյց տալիք նուիրումէն ու նախանձախնդրութենէն:

Կ, աղօթենք առ բարձրեալն Աստուած որ մեզի շնորհէ երկնային իմաստու-  
թիւն ու նուիրում ծառայելու իր փառքին ու մեր եկեղեցիին եւ ազգինց:

Վարդան ԲՀՆՅ.Տ Ասատուրեան

*Վարդան ԲՀՆՅ.Տ Ասատուրեան*  
*Բնակիչ*